# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էյչ Գրուպ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-26/182 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | սեղանի թենիսի հավաքածու | սեղանի թենիսի հավաքածու | Գնման առարկա է հանդիսանում՝ Հայաստանում Ֆրանկոֆոնիայի խաղերի անցկացման համար մարզագույք, որի լրակազմը բաղկացած է ստորև ներկայացված մարզագույքերից. 1.Սեղանի թենիսի սեղան 16 հատ. Թենիսի սեղան մրցակցային հաստատված սեղանի թենիսի միջազգային ֆեդերացիայի ITTF-ի կողմից: Սեղանի յուրաքանչյուր կեսը հագեցած է անկախ գլանային համակարգով, որը հեշտացնում է սեղանի տեղափոխումը մասերով (ընդհանուր 8 ռետինե գլանափաթեթներով կողպեքներով): Հարմամավետ ծալովի մեխանիզմ սեղանի վրա ամրացնող համակարգով: Շրջանակը պատրաստված է պողպատե պրոֆիլից 40x60մմ փոշոտ ծածկույթով: Խախադաշտի պարագիծը ամրացված է 60մմ պողպատե եզրով, սեղանի մակերեսը հակաշողացող ծածկույթով: Համապատասխանում է Եվրոպական անվտանգության EN 14468-1 վկայականին: Փաթեթավորված է 2 ստվարաթղթե տուփերում, որոնցից յուրաքանչյուրն ունի 158x142x10սմ չափսեր: 2.Սեղանի թենիսի ցանց-16 հատ. Ամուր կարծրացած մոնտաժային պտուտակներով հաստատված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | սեղանի թենիսի միջազգային ֆեդերացիայի ITTF-ի կողմից գույնը՝ կապույտ կամ կանաչ: 3.Սեղանի միջև պատնեշներ-100 հատ. Երկարությունը 2.33 մ, բարձրությունը 70 սմ, պատնեշի գույնը պետք է տարբերվի գնդակի գույնից, կոնստրուկցիան ծալվող-հավաքվող: Հաստատված սեղանի թենիսի միջազգային ֆեդերացիայի ITTF-ի կողմից: 4.Հաշվիչ-12 հատ. Հաշվիչ ծալվող՝ պլաստիկե ստենդով, PVC համարներով 0-20 և 0-5 (կոմպլեկտների համար), խաղի ընդմիջման քարտերով, թվերի տեսանելիությունը երկողմանի: Հաստատված սեղանի թենիսի միջազգային ֆեդերացիայի ITTF-ի կողմից: 5. Սրբիչի համար տարա- 20 հատ. Սրբիչի տարան պատրաստված է հաստ ստվարաթղթից, թեթև տարան թույլ է տալիս հեշտությամբ տեղաշարժել խաղադաշտում, ծավալը՝ 80x40x40սմ: Հաստատված սեղանի թենիսի միջազգային ֆեդերացիայի ITTF-ի կողմից: 6. Մրցավարական սեղան-10 հատ. Մրցավարական սեղանի չափսերը՝ 80x35x72 սմ, քաշը՝ 15 կգ. Հաստատված սեղանի թենիսի միջազգային ֆեդերացիայի ITTF-ի կողմից: 7. Մրցավարական հավաքածու-10 հատ. Մրցավարական հավաքածուն պարունակում է 2 դեղին քարտ, 2 կարմիր և 2 սպիտակ խաղի ընդմիջման քարտ ինչպես նաև 1 մետաղադրամ և 1 ցանցաչափ: Հաստատված սեղանի թենիսի միջազգային ֆեդերացիայի ITTF-ի կողմից: 8. Մրցավարի բարձրահարկ աթոռ-10 հատ. Մրցավարի բարձրահարկ աթոռն ունի ամուր մետաղական շրջանակ, որը պատրաստված է 25 մմ տրամագծով պոլիմերային ծածկույթով կլոր խողովակից: Այն հագեցած է հարմարավետ փափուկ նստատեղով և մեջքի հենակով, ծալովի սեղանով և ծալովի ոտքի հենակով: Աթոռի հիմնական չափսերը՝ •Նստատեղի և մեջքի սպունգի հաստությունը՝ 50 մմ, •Մեջքի հենակի բարձրությունը՝ 250 մմ, •Մեջքի հենակի լայնությունը՝ 350 մմ, •Նստատեղի լայնությունը՝ 350 մմ, •Նստատեղի խորությունը՝ 350 մմ, •Նստատեղի բարձրությունը հատակից՝ 800 մմ: Հաստատված սեղանի թենիսի միջազգային ֆեդերացիայի ITTF-ի կողմից: 9. Գնդակ-50 տուփ. Գնդակը պատրաստված է նոր տեսակի պլաստմասից, որն ապահովում է |

| | | | |
|---|---|---|---|
| | | | գնդակի լավ հետադարձ հետագիծ, փաթեթում կա 10 գնդակ, հաստատված սեղանի թենիսի միջազգային ֆեդերացիայի ITTF-ի կողմից: 10. Տարաֆլեքս-1084 քմ. Taraflex՝ պրոֆեսիոնալ մարզական PVC սեղանի թենիսի դահլիճների համար նախատեսված հատակածածկ, որը հաստատված է սեղանի թենիսի միջազգային ֆեդերացիայի ITTF-ի կողմից, հաստությունը՝ 6.2մմ, գլանակի լայնությունը՝ 1.5մ, գլանակի երկարությունը՝ 26մ, գույնը՝ միագույն: Լրակազմում ներառված ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, փորձարկումը և մեկ տարի ժամկետով սպասարկումը իրականացվում է Վաճառողի կողմից՝ Գնորդի կողմից նշված հասցեում: Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օրը՝ հաշված գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Պայմանագրի կատարման փուլում նշված ապրանքի համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը, ինչպես նաև ապրանքի արտադրողից կամ նրա լիազորված պաշտոնական ներկայացուցչից տրամադրված երաշխիքային նամակ (MAF կամ DAF), որը հստակ հաստատում է մասնակցի իրավասությունը տվյալ արտադրանքը մատակարարելու Հայաստանի Հանրապետություն և տեխնիկական աջակցություն ապահովելու վերաբերյալ: Լրակազմում ներառված բոլոր սարքավորումները պետք է ունենան համապատասխանության սերտեֆիկատ սեղանի թենիսի միջազգային ֆեդերացիայի (ITTF) կողմից: Վաճառողը պարտավոր է տրամադրել արտադրողի կողմից տրված նամակ երաշխիքային և հետերաշխիքային սպասարկումը Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրողի կամ պաշտոնական ներկայացուցչի (դիստրիբյուտոր) կողմից իրականացնելու համար: |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Լրակազմում ներառված բոլոր մարզական գույքերը պետք է լինեն նույն ապրանքանիշի: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Эйдж Групп ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-26/182 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | |